Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1904. № 1448.

ԵՆՈՎՔ ՏԷՐ-ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՎԱՆՔ.

«Սիօնի մօտ, Փրկչի Գերեզմանին կից, Ս. Յակովբայ վանքի կամարների տակ դարիւ դարիւ մրմնջում են հայի խաղաղութեան, եղբայրասիրութեան և լուսամիտ ծգտումների զաղափարները»:

Արշակ Կայծուںի.

ՄՈՍԿՈՒԱ
ԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1904.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
НАРОДОВЕДЕНИЯ
СССР

281
Ս-37

C գրտ-ի 3253
281
ստ.-37
04 NOV 2009

ԵՆՈՎՔ ՏԷՐ-ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՎԱՆՔ.

«Սիոնի մօտ, Փրկչի Գերեզմանին կից, Ս. Յակովբայ վանքի կամարների տակ դարիւ դարիւ մրմնջում են հայի խաղաղութեան, եղբայրասիրութեան և լուսամիտ ձգտումների դաղափարները»:

Արշակ Կայծունի.

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
1904.

14 AUG 2013

7138

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 3 Февраля 1904 г.

60457·67

Типографія Х. Бархударянъ, Москва, Срѣтенка, д. Бѣляева.

ԲԱՂՄԵՐԱԽՏ ՀՕՐՍ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ

ՆՈՒԷՐ

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՑ.



ԲԱԶՄԵՐԱԽՏ

ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐ ԻՄ

Վաղամեռիկ մերկանս անփոխարինելի կորստեան սգալի օրեր ողբալու համար՝ Ս. Երուսաղէմի սրբավայրերը դիմեցիր. Երկնային Վարդապետի Ս. Գերեզմանին վերայ արցունքներդ թափեցիր և մխիթարուեցար։ Այդ ծանր հարուածը բաւական չէր կարծես. հաղիւ թէ հայրենիքդ էիր վերադարձել սիրելիներիդ մխիթարելու՝ դժբաղդ մեր աշխարհի ընդհանուր և յանկարծահաս աւերումները Վարագայ հովտից Քեզ Մասեաց ստորոտը փոխադրեցին նորից, և ահա այնտեղն էլ մահուան սև սուգը դարձեալ պաշարեց Քո ծերութեան ալեզարդ օրերը։ Նոր պանդխտավայրումդ կանաչ կտրիճ զոյգ սիրելիներիդ մահարձանները բարձրացան աղի արցունքներ թափող աչքերիդ առջև. բայց Դու Ցովը երանելւոյն նման, և իբրև Աւետարանի ճշմարիտ հաւատացող մը, փառք տուիր Աստուծոյն. Փրկչի Ս. Գերեզմանի և Երուսաղէմի սրբավայրերի յիշատակներով մխիթարուած՝ մխիթարեցիր նաև քո դժբաղդ և տարագիր զաւակները։

Ս. Էջմիածին տեսնելիս՝ միշտ յիշեցիր և Ս. Երուսաղէմը, ուր անշէջ կերպով կըվառվի մարդասիրութեան, անձնազոհութեան և խաղաղասիրութեան կենդանի օրինակ—Յաչեալն Յիսուսի ճշմարիտ հաւատքի լոյսը։

Պարզ և սուրբ հաւատքիդ կենդանի ցոլքերը թող միշտ փայլին տարաբաղդ զաւակներիդ համար, և Քո բարոյասէր վարուց կենդանի օրինակը թող ընդերկար տարիներ նուիրէ մեզ Աստուած, որ կենդանի խօսքերովդ կարող լինիս յեղյղել մեզ ս. Աւետարանի հեղինակի և Նրա ծննդավայր Ս. Երուսաղէմի պատմութիւնը, զոր կըսիրես հոգւոյդ չափ. ահա և այդ առթիւ սոյն փոքրիկ աշխատութիւնս կը նուիրեմ բազմերախտ հայրութեանդ։

Ամենախոնարհ որդիդ

ԵՆՈՎՔ ՏԷՐ-ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Երուսաղէմում գտնւում է Քրիստոնէից ամենահին և ամենանուիրական մի վանք, ուր Քրիստոսի աշակերտներից ընտրված Առաջին Եպիսկոպոսը հաստատել է իւր աթոռը։ Այդ առաջին Եպիսկոպոսը Տեառն եղբայր Յակովբ Առաքեալն էր, որի անուամբ բաւիրացած է Ս. Յակովբեանց վանքը։ Այդ վանքումն է գտնւում Երուսաղէմի Հայոց պատրիարքական աթոռը՝ իւր միաբանութիւնով։

Աւանդութիւնը ասում է, որ այդ վանքումն է Յակովբ Տեառն եղբօր իսկական աթոռը, ուր նա բազմել է իբր գլխաւոր հովիւ ընդհանուր քրիստոնեաների։

Ներկայումս, ամէն տարի, սուրբ Յակովբայ տօնախմբութեան օրին միայն, Երուսաղէմի Հայոց Պատրիարքը հանդիսաւորապէս բազմում

է այդ աթոռի վերայ, իբրև յաջորդ նոյն Առաքեալի և Առաջին Եպիսկոպոսի։

Մեզ երբէք հետաքրքրական չէ գիտենալ, թէ այժմ ուրիշ Քրիստոնեայ ազգերը ընդունում են այդ աթոռի առաջինն և գլխաւոր լինելն՝ թէ ոչ. կամ թէ Հռովմի Պապը — Պետրոս Առաքեալի յաջորդն կ'ընդունի Յակոբը Տեառն եղբօր աթոռի յաջորդին իբրև Քրիստոնէութեան առաջին հովուութեան և Եպիսկոպոսութեան ներկայացուցիչ։ Սակայն, ընդհակառակն աւելի հետաքրքրական է մեզ, և պէտք է լինի ընդհանուր հայերի համար այդ վանքի գոյութիւնը, որ քրիստոնութեան պատմութեան հետ հաստատուել է այդ նուիրական երկրի մէջ և մեր նախնիք իրենց արեան գնով ջանացել են միշտ հաստատուն պահել, և այդպիսով մինչև մեզ են հասցրել։

Իսկ այժմ ընդհանուր հայերին է մնում այդ պարտքը, որ նոյն վանքի գոյութիւնը բարելաւելու և նրա բարոյական պատիւն բարձրացնելու համար. իրենց նիւթական նպաստները չլքնային երբէք. որպէսզի մեր այդ հնադարեան վանքը, իւր շուրջը գտնուած հսկայ ազգերի նախանձոտ մրցման մէջ, նիւթական դժուարութիւններից չ'ընկճուի և չը կորցնէ իւր դիրքը։

Ներկայ դարը միմիայն տնտեսական և նիւթական ուժով է կառավարվում. նիւթական ուժը շատ անգամ կլանում է բարոյական սկզբունքներին. իսկ մենք հայերս չունենք ոչ մի յայտնի բարոյական ուժ՝ բացի հայ Եկեղեցւոյ անկախ և ինքնուրոյն պատուէն, որ մեզ նման մի խեղճ ազգը հզօր և հսկայ ազգերի շարքին է կազմեցնում այն տաճարների և սրբավայրերի մէջ՝ ուր մեր պաշտելի Աւետարանի հեղինակի պատուին սեղաններ են կանգնեցրել պատարագի համար, ուր նրա մարտիրոսութեան և անձնազոհութեան սուրբ տնօրինութիւնները կը յարգեն ընդհանուր քրիստոնեաներն և աշխարհիս վերայ չըկայ մի տեղ, ուր հայ ազգն միւս քրիստոնեայ հզօր ազգերի շարքին այնքան փառաւոր և միջազգային դիրք ունենայ՝ ինչպէս որ ունի Սուրբ Երուսաղէմում։

Վաղուց տիրել էր ինձ մի փափաք՝ այս մասին խօսել ռուսահայ սիրելի եղբայրներիս հետ. հրապարակաւ հրաւիրել նրանց ուշադրութիւնը Երուսաղէմի Հայոց Պատրիարքական աթոռի և Ս. Յակոբեանց վանքի կարևորութեան վերայ. և ահա այս անգամ ներկայացաւ մի առիթ, որ քաջալերեց ինձ այդ փափաքս իրագործելու համար։

Նախորդ 1903 տարւայ Սուրբ Էջմիածնի 1600 ամեակի առթիւ Ս.-Պետերբուրգում հրատարակուած է մի փոքրիկ աշխատասիրութիւն, որի յառաջաբանն որչափ կարճ՝ այնքան ազդու և զեղեցի՛կ է ցոյց տալիս, թէ հայ ազգն իւր առանձնայատկութիւններով փայլում է աւելի իւր եկեղեցւոյ ստուերում և 'ի միջի այլոց ասում է, «Մասիսի ստորոտում Ս. Էջմիածինը 1600 տարի կանգնած է իբրև վկայ հայկական ազգի փառաւոր անցեալի, Սիօնի մօտ՝ Փրկչի Գերեզմանին կից, Ս. Յակոբայ վանքի կամարների տակ դարիւ-դարիւ մրմնջւում են հայի խաղաղասիրութեան, եղբայրսիրութեան և լուսամիտ ձգտումների գաղափարները։

Փրկչի Սուրբ Գերեզմանն երեք պահապան ունի, դորանք երեք ազգի պատրիարքներն են, Հայոց, Յունաց և Լատինացոց։ Եւ եթէ Լատին և Յոյն Պատրիարքներին նեցուկ են եղել և են բազմաթիւ զօրեղ թագաւորները, հայը յենուած է միայն Խաչին, միայն Աւետարանին. և Խաչով և Աւետարանով տէր է Յիսուսի Գերեզմանին, որի վերայ և Հայաստանեայց Եկեղեցւոյ նախնաւանդ ծէսերն է կատարում՝ մայրենի լեզուով—Հայոց լեզուով։

Ազգերն ապրում են իրենց առանձնայատկու-

թիւններով, որոնցով շատերը բախտաւոր են, երջանիկ. և այդ բախտաւորութիւնն ու երջանկութիւնը նորանց վիճակվել է քաղաքական հանգամանքների շնորհիւ։ Հայի առանձնայատկութիւնը որոշող գլխաւոր գործօն այսօր եկեղեցին է։ Հայն այսօր եկեղեցւոյ ստուերումն է յիշում իւր ծագումը, իւր մայրենի լեզուն, իւր նախնեաց սխրագործութիւնները և նորանց թողած ժառանգութիւնները։» (Ա. Կ.)

Այն տողերից աւելի գեղեցիկ ո՛չ մի խօսք չէ կարող լինել, որ ամէն մի հայուն ցոյց տար թէ ի՞նչ որոշ չափով հայն պարտքեր ունի դէպի իւր եկեղեցին և դէպի իւր մայրենի լեզուն։ Նոյնպէս և Երուսաղէմի մէջ հայոց ունեցած դիրքը մասնաւորապէս ցոյց տուած է շատ փառաւոր կերպով. որից նորէն յառաջ կը բերենք հետևեալ տողերը։

«Շատ հին ազգերը, շատերն իսկ հայերի դրացիներ՝ զօրեղ, աշխարհ դղրդացնող Ասորիք Բաբելացիք, Մեդիացիք, Եգիպտացիք և այլքն չքացել են աշխարհի երեսից. սակայն հայկական ազգը ո՛չ միայն իւր գոյութիւնն է պահպանել, իւր հայրենիքը գտնել, այլ Աւետարանը գրկած՝ այսօր ազատ, անկախ եկեղեցւոյ իշխանութեամբ կանգնած է լուսաւոր ազգերի

շարքում, կանգնած է Փրկչի գերեզմանի մոտ և կանգնած իբրև նորա տերը, նորա պահապանը։» (Ա. Կայծ.—Ս. Էջմիածին 1600-րդ տարեդարձ Ս. Պետերբուրգ. 1903. երես 6—8)։

Երուսաղէմի վերայ քրիստոնէի մը ունենալիք զգացումն չէր միայն, որքան Էջմիածնի 1600-ամեակի առթիւ Ռուսահայոց մէջ լոյս տեսած այդ փոքրիկ՝ բայց շատ գնահատելի տետրակը, որ Թումանեան Պ. Արշակ Կայծունիի աշխատութիւնն է, բայց դժբաղդաբար իւր անունը չըկայ յիշուած նոյն տետրի վերայ, մեր վերև յառաջ բերած տողերումն ինձ համոզեց լիովին, թէ՝ հայ ազգն ի՞նչքան պէտք է պարծենայ իւր եկեղեցիովն, որի մէկ աթոռն էլ Երուսաղէմում, Ս. Յակոբեանց վանքումն է։

Ես չեմ ասեր թէ, պէտք է հպարտանանք Ս. Յակոբեանց վանքի քրիստոնէութեան առաջին եպիսկոպոսութեան աթոռն լինելուն վերայ. և ոչ էլ մեզ պատմական փաստեր կարևոր են, թէ ե՞րբ և ի՞նչ կերպով հայ ազգն այդ առաքելական աթոռն իւրացուց. պատմագէտները թող կատարեն այդ պարտքը։ Այլ մեզ պէտք է քաջալերէ այն իրականութիւնը, որ ընդհանուր քրիստոնէից յարգանք վայելող Յակոբ Տեառն եղբօր հովուական աթոռը կը բաղմի

հայ Պատրիարքը. նրա փարախում կապաստանի հայ միաբանութիւն մը, հայ լեզուն հընչում է նրա կամարների տակ. հայի շարականներ են երգում նոյն տաճարի մէջ, ուր երբեմն ընդհանուր ազգերից բաղկացած քրիստոնեայ եկեղեցին նուիրագործում էր սիրոյ և խաղաղութեան սուրբ պատարագը։

Եթէ յետագայ դարերը նախանձ սերմանեցին այդ պարզ հաւատացեալների սերնդեան սրտում, որով նրանք սկսեցին կրօնական ծէսերի սին վիճաբանութիւններով զբաղվել. եթէ հռովմ գլուխ բարձրացրեց և ինքզինքն ընդհանուր քրիստոնէից գլուխ կուզէ հռչակել. եթէ Բիւզանդիոնը հպարտացաւ և Պոլսոյ մէջ տիեզերական պատրիարքութիւն հաստատեց, սակայն Յակոբեանց վանքի հայ միաբանութիւնը իւր համեստ դիրքը չը փոխեց երբէք. նա հաւատարիմ մնաց Երկնային Վարդապետի և Աւետարանի հեղինակի ամենաբարձր սկզբունքներին. հայ Պատրիարքը միշտ հետևեց սիրոյ և խաղաղութեան ձայնին, որ բացայայտ կերպով հընչում է, «Ձեզանից ով որ մեծն է՝ նա սպասաւոր պէտք է լինի։»

Երուսաղէմի հայոց Պատրիարքութիւնը նոյնպէս երբէք չը բարձրամտեց միւս աթոռների

դէմ իւր առաքելական աթոռի իրաւունքներով. այլ նա շատ լաւ հասկացաւ Ցիսուսի շեշտած այն խօսքերը, որ ասաց «դուք ամենեքեանդ մի էք։»

Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Երուսաղէմի պատրիարքութիւնն աշխարհական ձրգտումներով նուաստացած չէ բնաւ. բայց զանազան դարերում հեթանոսների աւերումները, քրիստոնեայ ազգերից զօրեղ դիրք ունեցող Յոյն և Լատին ցեղերը թէ և շատ անգամ խլել են նրա իրաւունքները, միշտ խանգարել են նրա խաղաղութիւնը, սակայն և այնպէս նա միշտ մնացել է իւր բարոյական բարձրութեան վերայ։

Այդ պատրիարքութեան համեստ դիրքը և պարզ պատրիարքարանը արգելք չեն կարող լինել, որ ներկայումս ամենաբարձր և տիրող ազգերի պետերը, Երուսաղէմ գնալիս չ'այցելեն նաև Հայոց Պատրիարքին. ինչպէս որ այդ ցոյց տուեց Գերմանիոյ Վեհապետն, իւր նախորդներին հետևելով։

Ուրեմն երբ օտար լուսաւորեալ ազգերը և վեհապետները յարգում են Հայոց Երուսաղէմի այդ հնադարեան պատրիարքութիւնը, հապա ո՞ւչափ պարտաւոր է ամէն մի Հայն այդ վանքի գոյութեան համար մտածելու, և իւր կարողու-

թեան չափովն օգնելու այդ վանքին, որ նիւթական անտանելի դժուարութիւնների մէջ, պարտուց տակ շարունակ կը ճնշուի։

«Պա՞րտք կայ Երուսաղէմի վերայ, Պա՞րտք ունի, շա՞տ պարտք ունի մեր Երուսաղէմի պատրիարքութիւնը, տարին ահագին գումարներով տոկոս կը վճարէ, պէտք է ատոր մի ճար գտնել, պարտքից ազատել մեր վանքը։» Այս է եղեր 'ի վաղուց Երուսաղէմի և Պոլսոյ Հայ Պատրիարքների դիմումները դէպի Թրքահայ ժողովուրդ. և անոնց ամենայետին մշակն անգամ, ամենախեղճ գիւղացին անգամ, իւր տէրութեան վճարելիք զինուորական տուրքին հետ տարին մի քանի ղուրուշ (8 կոպ.) սիրով վճարել է Երուսաղէմի պարտուց հաշուին, սակայն և այնպէս այդ պարտքերն չեն վերջանար, վանդի օտարների նախանձը չը թողներ որ վերջանայ։

Ուստի ընդհանուր Հայ ազգի պարտքն է, որ իրենց հնադարեան մի պատրիարքական աթոռի պատիւ պահպանել և բարձրացնել աշխատեն ընդմիշտ։ Եթէ Թրքահայ մշակն անգամ - իւր տուրքը չը խնայեր Երուսաղէմին, Ռուսահայ հեղբայրնիս երբէք չը պէտք է խնայեն. իսկ նրանց հարուստ դասակարգերն աւելի ևս պարտաւոր են իրենց բարեսիրական նպատակներին իբրև մի

կենդրոն ընտրել Երուսաղէմի Հայոց Ս. Յակովբեանց վանքը. ուր հոգևոր բարձր ձեմարանի, ճոխ գրադարանի, արուեստանոց—որբանոցի, հիւանդանոցի, նոյնպէս և շատ մը վանքերի վերանորոգման, և կալուածներէ կանոնաւորութեան համար՝ գրամական մեծ կարիք կայ ընդ միշտ:

«Ս. Էջմիածին» գրող յարգելի հեղինակը շատ յարմար տեղուն է յիշել Ս. Յակովբեանց վանքի անունը: Վասն զի եթէ Ս. Էջմիածինն, իբրև մայր աթոռ, Հայերի ուշադրութեան արժանի է, նոյնպէս և Երուսաղէմի Պատրիարքական աթոռը, որ աւելի հին է, նոյնպէս արժանի է ուշադրութեան:

Երուսաղէմը ընդհանուր քրիստոնեայ ազգերի համար միջազգային և նուիրական մի սրբավայր է. Ամերիկայէն, Եւրոպայի զանազան խորերէն Յոյն և Կաթոլիկ անթիւ ուխտաւորներն այցելում են այնտեղ, մեծ մեծ գումարներով նուիրատուութիւնները կանեն իրենց վանքերին. իսկ խեղճ հայոց վանքերն, հաղիւ թէ տարվայ ընթացքում մի քանի ուխտաւորներ կունենան, որոնցմէ շատերի տուած նուէրն արդէն իրենց վերջին լումն է:

Եւրոպացի այցելուների մէջ յաճախ կը պա-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

60457-67

տահին շատ մը միլիոնատէրերը, արքայազուն իշխան և իշխանուհիները, դիւանական մարմինները, որոնք ամէնքն էլ կը տեսնեն, որ Երուսաղէմի բոլոր սրբավայրերում Յոյն և Լատին աշխարհածանօթ հոգևորականութեան կողքին, հաւասար իրաւունքներով, կանգնել է մի փոքրիկ ազգի հոգևորականութիւնը—հայոց միաբանութիւնը. մինչդեռ մի այդպիսի տեղը՝ շատ մը հզօր և պետական ազգերի կղերն իրաւունք չունի իւր պատարագն անելու:

Սկսա այս պարագան ընդհանուր աշխարհին ցոյց կըտայ, որ քրիստոնէական նախնի դարերում, մինչ Հռովմի և Բիւզանդիոնի իշխանութեան կը հպատակէր աշխարհի մեծ մասը, հայն այն ժամանակ ոչ թէ միայն քրիստոնէական կրօնի ծաւալման առաջին հոգատար ազգն է եղել, որով իւր ձեռքն է պահել Յակովբ Տեառնեղբօր Պատրիարքական աթոռը, այլ նա և քաղաքական մեծ կարևորութիւն ունեցող մի դիրք է ունեցել. որով թէ Ս. Յարութեան տաճարում, և թէ ուրիշ նշանաւոր սրբավայրերում, այդ երկու նշանաւոր քրիստոնեայ ազգերին հաւասար իրաւունքներ ունեցել է. ուր ոչ մի ուրիշ ազգը չէ ունեցել մինչ այժմ:

Սակայն ներկայումս ամէն քրիստոնեայ ազգե-

ՊԵՏ ԿՍՍ ԳԱ ԳԱՐԱՆ ԳՐՍ ԼՏՍ ԷՒԱ ՀՍՍՌ-ԱՌՄ ՍՍՌ Ա. ԿՄ. Ա ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ըրն ձիգ են թափում տեղ գրաւել Երուսաղէմում։ Ռուսիայ վաղուց արդէն տեղ է գտնել Ս. Երկրում, և շատ փառաւոր ու հոյակապ վանքեր շինել է, ուր կը պահէ հարուստ միաբանութիւն*)։

Գերմանիոյ վեհապետն, որ Լուտերական եկեղեցւոյն կը պատկանի, և հին եկեղեցիների ծիսականութիւնները չընդունիր, վերջերումս շատ մեծ հանդեսով ձիգ թափեց և Թիւրքայից վերցրեց մի հին տաճար, իբր նուէր, և ժամանակաւորապէս յանձնեց կաթոլիկ կղերի պահպանութեան. այդ ժամանակն էր, որ նա անձամբ այցելելով Ս. վայրերը, պատուեց նաև Հայոց Պատրիարքարանը իւր վեհ այցելութեամբն։

Այդ պարծանքն ընդհանուր հայերին կը վերաբերի. և իսկապէս ամէն մի ուշադիր և լուրջ ուխտաւորն ուրախութեամբ կը վկայէ, որ չը կայ աշխարհիս վերայ մի տեղ, ուր հայը երևնար ուրիշ ազգերին հաւասար իրաւունքներով, ինչպիսին ունի Երուսաղէմում Քրիստոսի Գերեզմանի և այլ սրբավայրերի մէջ, իրեն առանձին փայլովն։

*) Ռուսաց գնած տեղերից երևացել են շատ մը հին հայկական յիշատակարանները։

Այդ սրբավայրերում մենք չը պէտք է նշմարենք միմիայն լոկ հայ կղերականութիւն մը. այլ յանձին մեր հայ վանականներին պէտք է դիտենք մեր ազգի անցեալը, որ փառաւոր է եղել. թէ և այդ փառաց բեկորները միմիայն եկեղեցւոյ ստուերումն ենք տեսնում։

Երուսաղէմի հայոց վանքի ստուերումն մնացած այդ բեկորն մի հասարակ բան չէ, քրիստոնէութեան յաղթանակի աթոռն է այդ։ Վասն զի երբ Քրիստոսի առաքեալները Յակոբ Տեառնեղբօր Երուսաղէմի անդրանիկ եպիսկոպոսութեան աթոռ նստեցրին և իրենք ցրվեցան աշխարհի զանազան կողմերը, և նահատակուեցան բոլորն էլ. սակայն իրենց յաղթանակի դրօշակը կանգուն մնաց Երուսաղէմում։

Այդ յաղթանակի դրօշակը բարձրացած էր Առաջին պատրիարքի—Ս. Յակովբայ գերեզմանի վերայ կանգնած տաճարի գլխին, երբ տակաւին ոչ Ս. Էջմիածին կանգնել էր Մասեաց ստորոտի վերայ, ոչ Սուրբ Սոփիան՝ Վոսփորի ափերում, և ոչ Ս. Պետրոսի տաճարն՝ Հռովմում։

Ահա այսօր այդ քրիստոնէութեան յաղթանակի, Յակովբ Տեառնեղբօր անդրանիկ եպիսկոպոսութեան աթոռը կը նստի Հայ Պատրիարքը, այդ վանքին կը տիրէ հայ միաբանութիւնը.

և այդ պարագան ընդհանուր հայերին, իսկապէս, պարծանք պէտք է համարել, որոնց անցեալը կապուել է քրիստոնէութեան յաղթանակին հետ։

Այդ պարագային երբէք չը պէտք է նայենք կրօնական նեղ հայեացքով, և դրա համար էլ միշտ կրկնում եմ, որ Երուսաղէմի հայոց փառաւոր դիրքն ընդհանուր հայերին է պատկանում։ Ուրեմն այն ամէն հայը, որ հայի արիւն կրկրէ, իրեն պարծանք պիտի համարէ ոչ թէ հայ եկեղեցւոյ ծիսակատարութիւնը, այլ այն ազգային անկախ եկեղեցին, ուր հայ լեզուն կաղօթէ, ուր հայի անցեալը կը փայլի, և ուր ներկայումս հայ ազգն, իբրև Քրիստոսի խաղաղասիրութեան զինուորը, հայ եկեղեցւոյ բարոյական դիրքը կը բարձրացնէ։

Սուրբ Երուսաղէմի հայ միաբանութիւնը, իւր ուսումնական աննախանձելի վիճակին մէջ, իւր զարգացման սահմանափակ ուժովն, լաւ հասկացել է քաղաքական տնտեսութեան կարևորութիւնը. ուստի մահու չափ դէմ դրել է օտար ոտնձգուիներին, և կրցածին չափ պահել, պահպանել և մեզ է հասցրել մեր նախնեաց իրաւունքների մեծ մասը. մանաւանդ հոյակապ և վսեմ պատրիարքական աթոռ մը։

Իսկ եթէ շատ իրաւունքներ և շատ հոյակապ վանքեր կորսնցուցած է, դա միայն իրեն յանցանքին չենք կարող վերագրել՝ երբ 'ի նկատի ունենանք, որ Եւրոպայի հզօր պետութիւններն էլ խաչակրաց ահագին բանակներ ոչնչացրին, բայց իրենց նպատակին չը հասան։

Հայ խեղճ միաբանութիւն մը մեծ գործ է կատարել այսչափն էլ մեզ հասցնելով։ Իսկ երբ այսօր մեր ազգն դարուս լուսաւորութեան, և քաղաքակրթութեան ասպարէզին վերայ իբրև մի ազգ ճանչցուելու իրաւունքներն ունի, իւր առաջին պարտքն պէտք է համարէ հայ հոգևորականութեան մինչև օրս պահպանած Ս. Երուսաղէմի ազգային իրաւունքներին հոգ տանել, օգնել նրան թէ նիւթապէս և թէ բարոյապէս։

Ներկայ տխուր հանգամանքներում, մեր ռուսահայ եղբայրները գրեթէ շատ քիչ կայցելին Ս. Երուսաղէմ։ Եթէ վիճակագրութիւն լինէր, ես կարող էի հաստատել, որ ճանապարհների և հաղորդակցութեան սոսկալի դժուարութիւնների ժամանակը, մեր նախնիք փոքր Ասիայի և Սիրիայի ամբողջ տարածութիւնը ոտքով կտրում, անցնում և հասնում էին Ս. Երուսաղէմ ուխտի, ամիսների ընթացքում։ Իսկ այժմ,

որ մի երկու շաբաթվայ ճանապարհ է դարձել երկաթուղիի և շոգենաւի շնորհիւ, դժբաղդաբար շատ քիչ ուխտագնացութիւն կայ հայերից։

Եւրոպացիներից ընդհակառակն է կատարւում։ Նրանց զբօսաշրջիկներն, լուսաւորեալ և ազատամիտ, թէ հարուստ և թէ աղքատ դասակարգերն, ամէն տարի անթիւ, անհամար խումբերով կայցելեն Ս. Երուսաղէմ, և իրենց վանքերի զանձանակներին կը նուիրեն ոչ թէ յետին լուման, այլ մեծ մեծ գումարները։

Եթէ ռուսահայ եղբայրնիս գնալու դիւրութիւն ունին, կամ թէ նոյն իսկ փափաք չունին ուխտաւոր լինելու Երուսաղէմին, այդ պարագան դադարտելի չէ երբէք. բայց անգիտակ մնալ հայոց Ս. Երուսաղէմում ունեցած սեպհականութիւններին և իրաւունքներին, դա աններելի յանցանք է ամէն մի հայի համար. վասն զի Երուսաղէմի հայոց իրաւունքները բոլոր հայերի սեպհականութիւնն է։

Ուրեմն այն ամէն հայն, որ կարող է մի աննշան չափով գոնէ, օգնել իւր ազգային սեպհականութիւններին, նա պէտք է օգնէ և Ս. Երուսաղէմի հայոց պատրիարքարանին. որպէս զի մեր այդ հնագարեան աթոռը կարող լինի իւր փառաւոր դիրքը պահպանել ընդհանուր

քրիստոնէից մէջ. և աւելի ևս փառաւոր թող լինի՝ ինչքան որ մեր ազգի բարոյական մակարդակը կը բարձրանայ։

Ռուսիայի ամէն կողմերից հայերը կարող են պոստայի դրամական ծրարով նիւթական օգնութիւն ղրկել Երուսաղէմի հայոց պատրիարքարանի հասցէին. ուր տեղ ռուսական փոստայի մասնաճիւղից ստացվում է ապահովագէս ամէն մի դրամածրարը։ Այսպիսի փոքրիկ կաթիլներով Երուսաղէմի միաբանութիւն գոնէ մի կանթեղ իւղագին կունենայ ռուսահայոց կողմից։ Իսկ մեծամեծ հաստատութիւնները, ինչպէս յիշեցինք, ուսումնարանը, տպարանը, գրքադարանը, ոլորանոցը և այլն բարենպատակ հաստատութիւնները հիմնել մեր դրամատիրաց և հարուստների պարտքն է։ Ռուսիոյ մեծ պետութեան պաշտպանութեան շնորհիւ, և Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան անմիջական հովանաւորութեան ներքև, այդպիսի բարոյական հաստատութիւնները շատ օգտակար կարող են լինել հայ ազգին։

Այսչափից աւելի ուրիշ խօսք չենք կարող աւելացնել. հասկացնելու համար մեր ռուսահայ եղբայրներին, որ իրենց պարտքն է ուշադրութիւն դարձնել դէպի Երուսաղէմի հայոց սեպ-

հականութիւնները, և դէպի նրանց բարելաւելու միջոցները. ուստի ռուսահայ հոգևորականութեան և լրագրութեան կը մնայ մեծ պարտաւորութիւն մը, որ ջանան ծանօթացնել բոլոր ռուսահայերին մեր ազգի Սուրբ Տեղեաց մէջ ունեցած փառաւոր դիրքն։ Մանաւադ հոգևորականութիւնը պարտաւոր է հոգ տանել, որ հոգևոր մխիթարութիւն փնտռող կտակարար հայ հարուստներին յորդորին և համոզեն, որ իրենց յիշատակին բարոյական հաստատութիւնները հիմնեն այդ նուիրական երկրի մէջ։

Կը ցաւինք որ մենք չենք կարող նոյնպէս տեղագրական գեղեցիկ պատկերներով ծանօթացնել հասարակութեան Երուսաղէմի զանազան սրբավայրերը. նոյնպէս չենք կարող բանաստեղծական դրուագներով կրօնասէրների կամ հաւատացեալների զգացումները զարթեցնել դէպի սուրբ երկիրը, դէպի Աւետեաց աշխարհը։

Վաղուց արդէն, շատ վաղուց, հայոց պաշտելի հայրիկն, Ս. Էջմիածնի Ամ. հայոց Վեհափառ հայրապետն, Իւր ազգու և հոգեզմայլ տողերովն, բանաստեղծական և քաղցրախօս գրչովն, հրաւիրել է հայ ժողովրդեանն դէպի Աւետեաց երկիրը։ «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» մի շատ գեղեցիկ հրաւիրագիր է Սիոնի

լեռան կերայ բարձրացած Քրիստոսի սեղանին, այդ հրաւիրագիր կարդացող ամէն մի քրիստոնեան ջերմ փափաք զգում է մասնակից լինելու այդ հոգևոր սեղանին։

Նորին Վեհափառութիւնը Սիոնի լեռնէն Մասեաց ստորոտը հրաւիրուելով, և Ամենայն հայոց Մայր Աթոռը բազմելէն վերջ, չըմոռացաւ. Երուսաղէմը։ Նա նորից տպագրել տուեց Իւր այդ պատուական աշխատութիւնը։ Որչափ փափաքելի էր, որ ամէն մի հայ կարդար այդ «Հրաւիրակը» որ ինքնին բանաստեղծական մի գլուխ գործոց է։

Իսկ Երուսաղէմի միաբանութեան վերայ լինելին հաւատ ունենալու համար, բաւական է, որ ներկայիս Ամենապատիւ Տէր Ցարութիւն Պատրիարքի հոգատար և բազմարդիւն պաշտօնավարութեան վերայ մի ակնարկ ձգենք։ Նորին Ամենապատուութիւնը, Իւր պաշտօնավարութենէն 'ի վեր, շատ աչալուրջ և հեռատես ուղղութիւնով մը, նորանոր օգտակար կարգ ու կանոններով բաւականին բարեփոխել է վանքի վիճակը, և ընդհանրապէս մեծ վստահութիւն կրվայելէ։

Աւելորդ չենք համարեր Երուսաղէմի սուրբ տեղեաց և հայ միաբանութեան վիճակը մեր

ռուսահայ եղբայրներին աւելի լաւ ծանօթացնելու համար, 1894 թուին ս. Էջմիածնի տպարանից լոյս տեսած, Մեսրովբ վարդապետ Մովսէսեանի «Ուղևորութիւն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթուղիկոսի ամենայն Հայոց Երուսաղէմից — Էջմիածին» վերնագրով գրքէն մի քանի քաղուածքներ յառաջ բերել, ցոյց տալու համար թէ ս. Էջմիածնի բարձրաստիճան և ուսեալ հոգևորականները շատ լաւ համարում ունին Երուսաղէմի միաբանութեան վերայ։

Այդ գրքում շատ գեղեցիկ նկարագրված է քրիստոնեայ միւս միաբանութիւնների կողմից հայերին հասած վնասները. սակայն մենք չենք կարող այդ մանրամասնութիւնները յառաջ բերել ամբողջովին, այլ կարևորներն միայն կը յիշենք։ Նոյն գրքի 143 երես կը կարդանք. «Ս. Աստուածածնից այցելութեան գնայիք Գեթսեմանի պարտէզը, որ Լատինները պարսպով շրջապատել են, և չորս բոլորը ներկայացրել են Քրիստոսի չարչարանաց այլ և այլ տեսարանները։ Յետոյ եղանք ռուսաց նորակառոյց տաճարի մէջ, որ շինուած է քաղաքի հանդէպ հովտի լանջի վերայ և որտեղից դէպի քաղաք հիանալի տեսարան է և ուր նստել է Յիսուս յանդիման տաճարին։ Այդ տեղից վեր բարձրա-

նալով գնացինք համբարձման լեռը։ Հայերը մի ժամանակ այդտեղ տաճար են ունեցել և այսօր էլ դեռ տաճարի սիւների հետքերը մնում են, բայց Յոյներն ու Լատիններն դրդել են տաճիկներին, իրենք էլ նոցա հետ միանալով, կործանել են տուեր եկեղեցին. իսկ այսօր մի փոքրիկ գմբէթ է կանգնեցրած նրա տեղ։ Այդ գմբէթի շուրջը, համբարձման օր երեք ազգերը միասին պատարագ են մատուցանում։ Նոյն համբարձման լերան բարձրութեամբ ընկնում է ռուսաց երկրորդ նորակառոյց վանքը, ուր մի ժամանակ հայկական վանքեր և շերիմներ են եղել. իսկ դորա փայլուն ապացոյցը այն թանկագին մոզայիքներն են, որոնց վերայ հայերէն տառերով և լեզուով այլ և այլ յիշատակարաններ կան գրուած. այդ մոզայիքներից մէկը և ամենամեծը գտնուում է ուղղակի տաճարի դրան մուտքի մօտը. մէկը տաճարից դէպի հիւսիս է ընկած, գտնուում է մի բաւական ընդարձակ արհեստական այրի մուտքի վերայ։ Այրի մէջ գտնուել են շերիմները, որ կը հաստատեն թէ այդ շերիմները Ռուբինեանց իշխանների շերիմներն են եղած։ Այդ երկուսի համաչափ ձեռանկարները կախուած է հայոց Պատրիարքարանի դահլճի հանդէպ։ Վերջին և 3-րդ մոզայիքը նոր է

գտնուել տաճարի արևելեան մասում. բայց ոչ, որովհետև այնտեղ ոչ մի շինութիւն չկայ, նորից հողով ծածկել են, որ չընկնասուի։ Ռուսները մեծ խնամք են տանում այդ թանկագին հնութեանց պահպանութեան վերայ»։

Անցնելով նոյն գրքի 146 երեսը, հետևեալը կըկարդանք.

«Ինչքան մեծ է Փրկչի ծննդեան տեղի նշանակութիւնը քրիստոնեաների համար, այնքան էլ մեծ են յաճախ կռիւները, որ մղում են երեք ազգութիւններն իրենց իրաւունքները պաշտպանելու, և եթէ կարող լինեն ուրիշինը ևս սեպհականելու։ Ժամանակի ընթացքում տեղի են ունեցել ամենասարսափելի կռիւները, ընդհարումները, այնպիսի դէպքեր են պատահել, որ պատարագիչ քահանան զգեստաւորուած փայտ ձեռին կռիւ է մղել հակառակորդների դէմ. տէրութեան թուլութիւնից և և անվճռականութիւնից ոչ մի հնար չը կայ խաղաղութիւնը վերականգնելու. որովհետև Յոյներն և մանաւանդ Լատիններն ուղղակի չեն ուզում խաղաղութեամբ ապրել. նոցա ձգտումն է աղմուկներ բարձրացնելով ցոյց տալ իւրեանց ջերմեռանդ հաւատակիցներին, որոնցից մեծ մասը անտեղեակ են կռիւների բուն պատճա-

ռին, թէ իրենք ի՞նչպիսի ջերմեռանդութեամբ, ի՞նչ մեծ զոհաբերութեամբ պաշտպանում են իւրեանց կրօնական շահերը Ս. Երկրում»։

Նոյն գիրքը շատ լաւ նկարագրում է հայ միաբանութեան կրած ծանր ծանր վնասները, վերոգրեալ խռովարարների կողմից. պատմում է Լատինաց կողմից հայոց եկեղեցւոյ յատակի խըսիր կտրելով՝ հայոց մասը յափշտակելնին, որի համար, նոյն գրքի 149 երեսում կաւելացնէ հետևեալն.

«Ամէն տարի խըսիր ձգելու արտօնութիւն են ստանում (հայերը) բայց Լատինները բռնութեամբ արգելք են լինում Սուլթանի հրաման կատարելուն։ Զարմանալի զուգադիպութիւն ենք գտնում այստեղ. կարծես ամէն ժամանակ և ամէն տեղ վիճակուած է հայերին երկու կրակների մէջ ապրել, և երկու կողմից էլ անընդհատ ճնշուել։ Ինքն ըստ ինքեան չնչին են երևում վերոյիշեալ խնդիրները, բայց ինչպէս ամէն տեղը, ամէն դէպքում, իրաւանց կորուստը աննշան հանգամանքներից է սկսում։ Հայերը մի քայլ յետ կանգնելով, շուտով երկրորդ քայլը յետ պիտի կանգնեն. և միջոց չեն ունենալ թուական և նիւթական ուժի առաջ այն մեծ իրաւունքները և դիրքը պահպանե-

լու, ինչպիսին նոքա այժմ ունին Ս. Երկրում։

«Երուսաղէմի վարդապետը փոքր հանակից կրթուելով Յակովբեանց վանքում, մանկութիւնից վարժւում է յարգել և պաշտպանել ազգային սեպհականութեան իրաւունքը։ Աւանդական պատուասիրութեան զգացմունքը շատ զօրեղ է նորա մէջ։ Մի հանգամանք ևս այնտեղ նպաստում է Ազգային իրաւանց պաշտպանութեան. ամէն մի դաւանութեան պատկանողը պաշտպանութիւն է գտնում այս կամ այն տէրութեան ներկայացուցիչների կողմից. օրինակ Լատիններին բացարձակապէս պաշտպանում է ամէն մի խնդրում Ֆրանսիայի հիւպատոսը։ Յոյների պաշտպանը Օրդոդոքս իշխանութիւններն են։ Հայերը արտաքին պաշտպանութիւն չունենալով, գտնւում են անմիջապէս Սուլթանի հովանաւորութեան տակ, իբրև նորա հպատակները։»

Իսկ Հայ միաբանութեան մասին կրխօսէ հետևեալն, նոյն գրքի 162 երեսն.

«Գալով վանքի ընդհանուր տպաւորութեան մասին, սպասածից լաւ գտանք։ Ամենից գովելին այն է, որ նոքա շատ կանոնաւորեալ կազմակերպութիւն ունին. նոքա լաւ ըմբռնելով վանական կեանքի պայմանները, աւանդապահ

են մնացել, կրել են և կրում են շատ նեղութիւններ անկրճատ պահպանելու իւրեանց իրաւունքները Ս. տեղերի վերայ։ Մենք տեսանք թէ Ս. Յարութեան տաճարում նոքա ինչքան տեղ ունին. տեսանք որ ս. Աստուածածնի ուղիղ կէսը. ս. Ծննդեան տաճարի մի մասը իրենցն է. համարեայ ամբողջութեամբ իրենց ձեռքն է Սիօնի լեռը, քաղաքի ամենաբարձրագիր և գեղեցիկ տեղը. այդ լեռան վերայ է շինած ս. Յակովբայ վանքը պատրիարքարանով, միաբանից խցերով, բազմաթիւ սենեակներով ուխտաւորների համար. այդտեղ է ուսումնարանը, մի շարք տներ վարձու տալու համար, և վերջապէս Հրեշտակապետայ և ս. Փրկչի եկեղեցիները։ Վերջինիս բակումն են թաղում պատրիարքներին. իսկ նորա առաջի մեծ տարածութեան վերայ թաղում են սովորական մեռեալներին։ Բացի այդ յայտնի տեղերից նոքա իրենց ձեռին ունին ընդարձակ հողեր, ձիթապտղի և խաղողի այգիներ, որոնք պահւում են մեծ խնամքով և որոնց թիւ տարեց տարի աւելանում է։ Այս բոլորից հետևում է որ միաբանութիւնը իր ուշքն ու միտքն միայն դէպի մի ուղղութիւն դարձրած լինելով, այն է՝ սուրբ տեղերի պահպանութիւնը, նոյն տեղերում կարգադրուելիք եկե-

ղեցական անհրաժեշտ արարողութիւնը և վանքի տնտեսական գործերը, ուստի չէ հետևիլ բարձրագոյն ուսման և գիտութեան։»

Սոյն վերջին տողերին դէմ, թոյլ ենք տալիս մեզ Արժանապատիւ հեղինակի կարծիքին հակառակն ասել, որ եթէ նիւթական միջոցները նպաստաւոր լինէին, Երուսաղէմի միաբանութիւնը իւր ծանր, պատասխանատու և դժուարին վիճակի մէջն անգամ, բարձրագոյն կրթութեան հոգ տանելուն չէր թերանար։ Այս մեր կարծիքն՝ միայն մեր համոզումն չէ, շատերը կարող են հաստատել. ուստի նորէն նոյն գրքից յառաջ կը բերենք հետևեալ տողերը՝ 165 երեսից.

«Երրորդ բաժակը առաջարկեց Սահակ Սրբազանը *) հրաւիրակներիս կենաց. գեղեցիկ և բանաստեղծական զարձուածներով համեմատելով իրար հետ Երուսաղէմի և Էջմիածնի վանքերը, և խօսելով թէ ի՞նչքան անհրաժեշտ և ուրախալի է աւելի յաճախ կրկնուող այցելութեամբ, սերտ կերպով կապուէին իրար հետ և շատ խնդիրներում իրարից տեղեկութիւն ունենալով՝ միաձայն գործէին։ Վեհափառի հրամանաւն Արիստակէս Սրբազանը **) պատասխանեց այդ խօսքերին, առաջարկելով Երուսաղէմի միաբանից կենաց։ Նա յայտնեց այս միտքը՝ թէ նա առանց շողոքորթելու և աւելացնելու, ուրախութեամբ նկատում է, որ այդտեղի միաբանութիւնը աւելի լաւ կազմակերպուած է, որ նոքա գիտեն թէ իրենց նպատակը Սուրբ երկրում ի՞նչ է, առանց այս ու այն կողմ նայելու՝ ճշտութեամբ հետևում են դէպի այդ որոշեալ կէտը։»

Ահա այս բոլոր տողերից բացայայտ երևում է, որ Երուսաղէմի Հայոց միաբանութիւնը միշտ հանդիպում է շատ ծանր դժուարութիւնների, որի համար միշտ տհապին ծախսեր պիտի անէ՝ որպէս զի մեր ազգային սեպհականութիւնները պահպանելու կարող լինի։ Այդ պատճառով էլ շարունակ փոխառութիւններ կանէ ծանր տոկոսներով, և 'ի հարկէ միշտ պարտուց տակ կը մնայ, քանի որ ընդարձակ եկամուտի աղբիւրներ չունի։

Այստեղ նորէն կը պարտաւորվիմք կրկնել, թէ հայ ազգն պարտաւոր է այդ պատրիարքական աթոռի պարտուց ծանրութենէն ազատուելուն հոգ տանելու... պարտաւոր է նոյնպէս նոյն ս. տեղեաց մէջ Հայոց սեպհականութիւնները, իրաւունքները և պատիւ պահպանելու համար,

*) Այժմեան Սսոյ կաթուղիկոսը։ **) Սեդրակեանը։

նորանոր օգնութիւններով այդ միաբանութեան օգնելու։

Նոյնպէս կրկնում ենք, երբ մեծ և հզօր ազգերը նոր 'ի նորոյ ջանքեր են թափում Երուսաղէմում սրբավայրեր ձեռք բերելու, իսկ հայերը, որ արդէն քրիստոնէական սկզբնական դարերից տեղ ունեն այդ սրբավայրերում, պարտաւոր են մի կողմ թողնել կրօնական խտրութիւն, ազգային ընդհանուր ուժով և անխարդախ սիրով, թէ Լուսաւորչականը, թէ Կաթոլիկը և թէ Բողոքականը պէտք է ձեռք ձեռքի տուած, շարունակ թափօր կազմեն Քրիստոսի այն Գերեզմանի շուրջը, որ մարդասիրութեան և խաղաղութեան գանձարանն է։ Նոյնպէս պէտք է միացած սիրով օգնել Երուսաղէմի Հայ Պատրիարքութեանն՝ թէ բարոյապէս և թէ նիւթապէս, որ նա աւելի դիւրին միջոցներ ունենայ Հայոց վանքերը հաստատուն պահելու, ազգային սեպհականութիւնները և իրաւունքներ պաշտպանելու և նրանց բարոյական պատիւն բարձրացնելու ընդհանուր քրիստոնայ ազգերի առջև։

Ահա թէ ի՞նչ պարտքեր ունին հայերը դէպի սուրբ Երուսաղէմ և դէպի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը։

Իբր վերջաբան, ես ինձ թոյլ եմ տալիս նա և

մի քանի խօսք ասել, որ ոչ թէ միայն իբրև քրիստոնեայ, այլ նաև իբրև մարդ, նկատելով Աւետարանի անմահ հեղինակի բարութիւնը, մենք պարտաւոր ենք յարգել Երուսաղէմի այն սրբավայրերը, ուր շրջեց խաղաղութեան աւետարեր հրեշտակն. ուր սէր և ընդհանուր մարդկութեան միանման և հաւասար եղբայրութիւն քարոզեց Երկնային Վարդապետն. ուր Փրկիչն մեռաւ և թաղուեցաւ, որ գազանական կլքերով մոլորուած մարդկութեան յաղթութիւն պարգևէ, նոր կեանք պարգևէ, լոյս և անմահութիւն պարգևէ։

Աշխարհիս վերայ մարդոց կեանքը բնական հարուածներին և պատուհասներին ենթակայ չէ այնչափ՝ որչափ որ ենթակայ է մարդկային արուեստական ուժի և կամայականութեան հարուածներին։ Ահա դրա համար էր, որ Երկնային Վարդապետը նոր մի ուժը և նոր մի օրէնք քարոզեց, որ արդէն մարդկային գոյութեան հետ, մարդոց բնաւորութեան հետ ստեղծուել էր վաղուց. բայց մարդիկը աշխարհիս բնական կոպիտ ուժին հետևելով՝ մոռացել էին այդ բարոյական ուժի և օրինաց ճշմարտութիւնը։

Այդ նոր ուժը՝ Սէրն է, այդ նոր օրէնքը՝ Խաղաղութիւնն է, և ահա մեր Փրկիչն այդ

Սէր և Խաղաղութիւնը միայն թողուց մեզ միակ կտակ. ոչ թէ այնպէս՝ ինչպէս մարդիկ կարող են խոստանալ։

Քրիստոսը իւր գերեզմանի հիմքը, Աւետարանի սկզբունքը այդ երկու նիւթերով շաղախեց. և այդ նիւթերից միայն բարձրացուց մի հոյակապ աշտարակը, որի վերայ կարող են վստահօրէն ապաստանել աշխարհիս ամէն ազգի և ցեղի մարդիկը։ Այլտեղ է փրկութեան միակ միջոցը, և այդ միջոցն է միայն, որ մարդոց կրբարձրացնէ նաև դէպի բարոյական անմահ կեանքը։

Բայց, աւաղ. եթէ սէր և խաղաղութիւն միայն թողուց մեզ մեր Փրկիչն, սակայն քրիստոնէութիւնը, կամ քրիստոնեայ ազգերը տակաւին չըկրցին հասկանալ Աւետարանի ճշմարտութիւնը. մարդիկ տակաւին չըճանչցան սիրոյ և խաղաղութեան արդիւնքը, որ է անսահման բարութիւնը, անտրտում և անվիշտ կեանքի ճանապարհը։

Աւետարանի հեղինակը իւր անձնանուէր պատարագի և խաչի ճգնաժամուն վերայ ներողամտութեան օրինակ ցոյց տուեց մեզ. թշնամիի և հալածողի համար աղօթք անել պատուիրեց մեզ. ներողամտութիւնը, անհոն և անսահման ներողամտութիւնը մեզ յիշատակ թողուց։

Սակայն ուր է մեր մէջ ներողամտութեան ոգին, ուր է հնացել քրիստոնէից սիրոյ և խաղաղութեան շինարար գործերը, որոնց փոխարէն սուրը տեղեաց վերայ անգամ, միմեանց դէմ նախանձով և ատելութեամբ են զինուած. կըռւում են նոյն իսկ և պատարագիչ քահանաները։

Մարդիկ հրապարակների վերայ, դիւանական դահլիճներում, փառաւոր սեղանների շուրջը սէր և խաղաղութիւն են քարոզում խօսքով միայն. իսկ իրենք իրենց ներքին կեանքի մէջ, իրենց տան սեղանի շուրջ, որդին հօր, հայրը զաւակներին և եղբայրը եղբօր դէմ դաւ են լարում, մահ են պատճառում, որ միմեանց ժառագութիւններ խլեն, միւսի պատառն էլ կլանեն, մէկին անսուաղ մեռցնեն և միւսին իրենց սեղանի վերայից հեռացնեն։

Աշխարհիս վերայ բոլոր տիրապետութիւնները և օրէնսգէտները զանազան օրինագրքեր հեղինակելով, յանցաւորներին և չարագործներին պատժելով, չեն կարողացել աշխարհիս երեսից վերացնել ոճիր և անիրաւութիւնը։ Իսկ երբ մարդիկ այնչափ զարգանան, որ կարողանան ստուգապէս ըմբռնել Աւետարանի ճշմարտու-

թիւնը, այն ատեն պատժական օրինաց փոխարէն պէտք է հաստատուի բարիներին վարձատրելու օրինագիրքը. իսկ չարերին զգաստացնելու համար, փոխանակ բանտեր բարձրացնելու՝ կրթարանները պիտի բարձրացնեն. փոխանակ պատերազմական կրթութիւններին՝ խաղաղութեան և ներողամտութեան դասերովն զգաստացնեն մարդկային սխալումներին ենթակայ մահկանացուներին: Ահա այս է Աւետարանի նպատակը:

Նոյնպէս երբ բանտերի և պատերազմի համար վատնուած գումարները բարգուին կրթական գործին յատկացված գումարին վերայ, երբ արգելանոցները կը քանդուին և նրանց տեղ կը բարձրանան հանրային ուսումնարանները, երբ պատերազմական գործիքների փոխարէն մարդոց ձեռք կուտան գրիչ և թուղթ, բահ և փրիչը, այն ատեն միայն պիտի նուազի չարագործների թիւը:

Պատերազմը աշխարհիս ամենամեծ չարիքն է, զոր ստեղծել են մարդիկ. իսկ երբ այսօր Ռուսական խաղաղասէր պետութիւնը հիմք դրել է խաղաղասիրութեան վեհաժողովին, 'ի հարկէ յետագայ դարերը պիտի արդարացնեն ընդհանուր քրիստոնէութեան ճշմարիտ յոյսը,

և աշխարհիս վերայ պիտի տիրէ սիրոյ և ներողամտութեան կատարեալ և կենդանարար օրէնքը. և այդ օրէնքն միայն կարող է մարդոց կատարեալ մարդ դարձնել, «ինչպէս որ մեր Երկնաւոր Հայրն կատարեալ է:»

Այդ օրինագիրքը Աւետարանն է, որ մեր Փրկիչը քարոզեց Երուսաղէմի հրապարակի վերայ: Սիոնի բարձունքից, Խաչի վերայից տարածեց Նա իւր ձեռները դէպի ընդհանուր մարդկութիւնը և հրաւիրեց բոլորին դէպի Աւետարանի թագաւորութեան հպատակութիւնը:

Այդ հպատակութեան «լուծը՝ շատ քաղցր է, բեռը՝ շատ թեթև է», ոչ մի մարդ չը ճընշուիր, չը նեղուիր այդ հպատակութեան մէջ. վասն զի Աւետարանի թագաւորութեան օրինագիրքը՝ ներողամտութիւնն է, նրա իշխանութեան կոչումն՝ անսահման սէրն է:

Ուրեմն նոյն իսկ ոչ թէ միայն քրիստոնէութիւնը, այլ ընդհանուր մարդկութիւնը շատ մեծ յոյսերով կարող է դիմել դէպի Աւետարանի թագաւորութիւնը, որի աթոռը հաստատուել է Երուսաղէմում. մարդասիրութեան և անձնազոհութեան օրինակ տուող Փրկչի Գերեզմանին վերայ:

Բայց քանի որ մարդիկը, ընդհանուր սիրով

չեն դիմել դէպի այդ խաղաղութեան թագաւորութիւնը, քանի որ, նոյն իսկ այդ սիրոյ և ներողամտութեան կենդանի մարմնացում եղող Յիսուս Քրիստոսի Գերեզմանին շուրջը, քրիստոնեայ ազգերը մին միւսի փառաց կընախանձին, միմեանց վնասել կաշխատեն, մենք, ակամայ, պարտաւորութիւն ենք զգում նորից կրկնելու, որ Հայ ազգն ալ իւր իրաւունքները և սեպհականութիւնները պահպանելու ջանք թափելով հանդերձ՝ խաղաղութեան և սիրոյ զենուոր պէտք է մնայ, յուսալով ընդ միշտ, որ Աւետարանի ճշմարտութիւնը մի օր պիտի յաղթանակէ. և Քրիստոս Գերեզմանը մի օր պիտի զարդարուի այն դրոշակով, որ ընդհանուր մարդկութեան սէր և լոյս պիտի բախշէ։

Այդ դրոշակը Աւետարանի թագաւորութեան դրոշակն է, որի չորս անկիւնի վերայ կըփայլեն Սէր, Լոյս, Ներողութիւն և Խաղաղութիւն բառերը. իսկ մէջտեղում, զենանշանի փոխարէն խաչաձև գրված է երկու բառ, այն է «Ընդհանուր Մարդկութիւն»։

Ուրեմն ամենքս էլ աչքերնիս դարձնենք դէպի այդ խաղաղութեան աշխարհը, դէպի Աւետարանի թագաւորութիւնը, որի մայրաքաղաքն է Սուրբ Երուսաղէմ։

ՀՍՍՌ-ԱԳԱ ԳՍՓ

ՀՀ Ազգային գրադարան
NL0160894

C գրտ-Ա
3253

1/2 30

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.